

Միօրեայ սեմինար Գանատայի Հայոց Թեմի  
Եկեղեցիներու հոգաբարձութեանց, Ազգային Երեսփոխաններու եւ  
Պատգամաւորներու

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Վարչութեան կազմակերպութեամբ եւ  
Նախագահութեամբ թեմիս բարեջան Առաջնորդ Տ. Խաժակ Ս. Արք.  
Յակոբեանի, տեղի ունեցաւ Հոգաբարձութեանց եւ Ազգային Երեսփոխան-  
ներու եւ Պատգամաւորներու միօրեայ սեմինարը, Շաբաթ, Հոկտեմբեր 31,  
2009-ին, Զինկաթընի մէջ:

Օրակարգը կ'ենդգրկեր դասախօսութիւններ, որոնց կարգին էր «Ծիսական  
Բարեկարգութիւնը» որ ներկայացուց Տ. Գառնիկ Զինկ. Գոյունեանը՝ Հոգեւոր  
Հովիւ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ եւ անդամ Ազգային  
Վարչութեան Կրօնական Ժողովին: Բարեջան Առաջնորդ՝ Տ. Խաժակ Ս. Արք.  
Յակոբեան ներկայացուց «Ընկերային, բարոյական եւ եկեղեցաբանական  
ժամանակակից հարցեր»ը, իսկ «Հայ Եկեղեցւոյ մարտահրաւերները  
Հիւսիսային Ամերիկայի մէջ» ներկայացուց Տ. Անուշաւան Եպկ.  
Ղանիւլեանը՝ Առաջնորդական Փոխանորդ ԱՄՆ Արեւելեան շրջանի:

Վերոյիշեալ դասախօսութիւնները հետաքրքրութիւն ստեղծեցին  
ներկաներուն մէջ, որոնք զանազան հարցադրումներ կատարեցին եւ որոնց  
հիման վրայ տեղի ունեցաւ շինիչ եւ գործնական առաջարկներ ու  
թելադրութիւններ:

Սեմինարի օրակարգին մաս կը կազմեր նաեւ եկեղեցիներու ներկայ  
իրավիճակի եւ ծրագիրներու մասին զեկոյցներ, որոնցմէ ետք Ազգային  
Վարչութեան ատեապետ՝ բժիշկ Ժան Առաքելեան ներկայացուց  
Առաջնորդարանի գործունեութեան ու ծրագիրներու մասին հակիրճ զեկոյց  
եւ տեղեկատուական մը:

Սրբազան Հօր պահպանիչով փակուեցաւ միօրեայ սեմինարի օրակարգը, լի  
ու դրական տրամադրութեամբ եւ եկեղեցաշէն գործունեութեան նորանոր  
մարտահրաւերներով:

